ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆՎԻՐՎՈՒՄ Է Ա. ԵՍԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2015

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67
Ե 540

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝
իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուզյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Դանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու/ ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2015.–208 էջ:

Ժողովածուն ամփոփում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 2014թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի նյութերը՝ նվիրված ականավոր իրավաբան Աղասի Եսայանի ծննդյան 100-ամյակին:

Այն ընդգրկում է իրավունքի գրեթե բոլոր ճյուղերի վերաբերյալ գիտական աշխատանքներ, որոնք աչքի են ընկնում բարձրացված հարցերի արդիանակությամբ, տեսական խորը վերլուծություններով և գործնական նշանակությամբ: Ժողովածուի մեջ տեղ են գտել ինչպես ճանաչված գիտնականների, այնպես էլ երիտասարդ դասախոսների ու ասպիրանտների աշխատանքները: Կարող է օգտակար լինել իրավաբան տեսաբանների, իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների ներկայացուցիչներին, իրավունքի տարբեր հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06
ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1933-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Հեղ. խումբ, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյան
"PERINCEK V. SWITZERLAND"ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17 ՎՃՌԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿՈՂՄԵՐԸ 5

Լևոն Գևորգյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ ԵՎ ՉԻՐԱԳՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԸ 18

Անի Սիմոնյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 25

Արթուր Վաղարշյան
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 35

Տարոն Սիմոնյան
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

Ալվարդ Ալեքսանյան
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ 68

Նարինե Դավթյան
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 87

Գևորգ Դանիելյան
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 98

Վարդան Այվազյան

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԻԶՄԻ (ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 124

Անահիտ Մանասյան
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 140

Արա Գաբուզյան
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ 149

Սամվել Դիլբանդյան
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 160

Аида Искоян
ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО ПРАВА: МЕЖДУНАРОДНЫЕ И НАЦИОНАЛЬНЫЕ ПРЕДПОСЫЛКИ 174

Գրիգոր Բեքմեզյան
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 190

ПРОБЛЕМЫ ПОНИМАНИЯ И ОПРЕДЕЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОГО РЕЖИМА КАК ЭЛЕМЕНТА ФОРМЫ ГОСУДАРСТВА

Артур Вагаршян

Заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ, доктор юридических наук, профессор

В статье на основе анализа понятии политический режим, государственний режим, государственно-политический режим, государственно-правовой режим, политико-правовой режим автор делает попытку разграничить их смысл и соотношение, выявить признаки понятия государственно-правовоого режима и дать его научное определение.

THE ISSUES RELATED TO THE UNDERSTANDING AND DEFINITION OF THE STATE-LEGAL REGIME AS AN ELEMENT OF STATE FORMATION

Artur Vagharshyan

Head of the YSU Chair of Theory and History of State and Law, Doctor of Legal Sciences, Professor

Based on the analysis of the concepts political regime, state regime, state-political regime, political-legal regime, state-legal regime, the author attempts to differentiate their meanings and relations, to identify the features of the state-legal regime and to give its scientific definition.

Բանալի բառեր՝ *պետության ձև, պետական ռեժիմ, քաղաքական ռեժիմ, պետաքաղաքական ռեժիմ, պետական կառավարման ռեժիմ, լեգիտիմություն, պետաիրավական ռեժիմ:*

Ключевые слова: *политический режим, государственний режим, государственно-политический режим, режим государственного правления, политико-правовой режим, легитимность, государственно-правовой режим.*

Key Words: *political regime, state regime, state-political regime, regime of state governance, political-legal regime, legitimacy, state-legal regime.*

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԿԱՏԵԼԻ ՈՐՈՇ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարոն Սիմոնյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Առաջին հայացքից բավականին խրթին հիմնախնդիրները, որ բարձրացված են հոդվածի վերնագրում, հետազոտողին միանգամից անլուծելի կամ գրեթե անլուծելի խնդրի առջև են կանգնեցնում: Բացի այն, որ վերնագրում ներկայացված յուրաքանչյուր բառ-հասկացություն ինքնին առանձին բացատրության, պարզաբանման կարիք ունի, դրանցով սահմանված խնդիրներն ավելի են բարդացնում առաջադրանքը:

Ավելի պարզ լինելու համար կարելի է նշել, թե բարձրացված ընդհանրական հիմնախնդրին ավելի սպառիչ պատասխաններ տալու համար ինչ հարցեր պետք է լուծում ստանան: Այդ հարցերից կարելի է նշել հետևյալները՝

1. Ի՞նչ մեթոդաբանություն կարելի է օգտագործել հասկանալու համար համակարգը, տվյալ պարագայում՝ անկայուն սոցիալ-պետական համակարգը, որը դասական առումով ոչ մի կանոն չունի.

2. Ի՞նչ հարաբերական օրինաչափություններ կարելի է նկատել՝ հարաբերությունների արագ զարգացման գործընթացների պայմաններում արդյունավետ իրավական նորմեր որոշակիացնելու համար, և ինչպե՞ս կարող են անցումային և անկայուն հասարակական համակարգերում որոշակիացվեն իրավական նորմերը, եթե այդպիսի համակարգերում գրեթե ոչ մի կայուն նորմ չի կիրառվում կամ գործում.

Այժմ փորձենք տալ պատասխան վերոնշյալ խնդիրներից յուրաքանչյուրին:

Առաջին: Մենք բազմիցս ենք նշել, որ համակարգերի բարդեցման և համալիրեցման զուգահեռ նվազում է դրանք դասական աշխարհընկալմամբ բացահայտելու և ճանաչելու հնարավորությունն ու հավանականությունը[1]: Աշխարհաճանաչողության դասական մակարդակում, որը շատ դեպքերում նույնացվում է դեկարտյան դետերմինիզմին, երևույթները, այդ թվում՝ սոցիալ-քաղաքական, պետահիրավական, խիստ պատճառահետևանքային կապերի մեջ են գտնվում՝ պայմանավորելով մեկը մյուսի զարգացումը: Ամեն ինչ փոխվում է, և դիտարկողի առջև ամբողջությամբ նոր իրականություն է բացվում, երբ նա դիտարկում է երևույթները տարբեր դիտանկյուններից, տարբեր ժամանակահատվածներում և տարբեր արագություններ ունեցող փոփոխություններ ընդգրկող համակարգերից:

Այս ամենից ելնելով է, որ ժամանակակից էպիստեմալոգիան կամ գիտաբանությունը մեզ հնարավորություն է տալիս օգտվել նաև ոչ դասական (քվանտոռելյատիվիստական) և հետ ոչ դասական (սիներգետիկական) գիտաճանաչողության մակարդակներից[2], որոնցից առաջինը զարգացել են Նիլս Բորի, Հայզենբերգի քվանտային մեխանիկայի ու Ա. Այնշտայնի հատուկ և ընդհանուր հարաբերականության տեսության միջոցով, իսկ երկրորդը՝ Ի. Պրիգոժինի, Հ. Հակենի, Ի. Ստեգներսի և մյուսների՝ քիմիայի, ֆիզիկայի ընդերքում հայտնաբերված սիներգետիկայի և համալիր համակարգերի տեսության միջոցով:

[1] Մանրամասն տե՛ս Տ.Վ. Սիմոնյան, «Պետահիրավական համալիրություն և սիներգետիկա, Մաս 1, Անցումային և անկայուն սոցիալ-պետական համակարգերի համալիրություն. սիներգետիկ աշխարհընկալում», Երևան, ԵՊՀ, 2013, էջ 19:

[2] Моисеева И. Ю., Концепция самоорганизации в контексте постнеклассической парадигмы, Оренбургский государственный университет, Вестник, ОГУ, 11՝ 2005, էջ 83:

Բարձրացված առաջին խնդրի պատասխանը տվել ենք մեր նախորդ աշխատանքներում[1], ուստի սույն աշխատանքի շրջանակներում մանրամասն դրան չենք անդրադառնա: Միայն կնշենք, որ «սիներգետիկական մեթոդաբանությունը իրավունքի համակարգային ճանաչողության չափազանց կարևոր մասն է: Այն իրավունքի տեսության ավանդական մեթոդների հետ հնարավորություն է տալիս գիտակցել իրավունքի համալիրությունը, առավել պարզ և տեսանելի դարձնել և հետևաբար գնահատել տեղի ունեցող իրավական իրադարձությունները, դուրս բերել դրանց օրինաչափությունները և առանձնահատկությունները, ինչպես նաև հնարավորություն է տալիս կատարել ինչպես ամբողջությամբ իրավունքի համակարգի, այնպես էլ դրա առանձին տարրերի ֆուտուրոլոգիական վերլուծություն՝ դրանով իսկ իրացնելով իրավունքի տեսության ֆուտուրոլոգիական գործառույթը: Հակառակ պարագայում այն (այսինքն՝ իրավունքի համալիրությունը չգիտակցելը կամ այդ համալիրությունը դասական գիտության մեթոդաբանությամբ ուսումնասիրելը) դատապարտված է անհաջողության, իսկ նման ուսումնասիրության արդյունքում ստեղծված իրավունքը ավելի շատ բացասական, քան դրական դեր կարող է խաղալ համալիր սոցիալ-պետական հարաբերությունները կարգավորելու գործում»[2]:

Պատասխանելով այն հարցին, թե ինչ մեթոդաբանություն կարելի է օգտագործել հասկանալու համար անկայուն սոցիալ-պետական համակարգը, որը դասական առումով ոչ մի կանոն չունի՝ կարելի է նշել, որ աշխարհաճանաչողության և գիտաբանության եր-

[1] Տ.Վ. Սիմոնյան, *Սիներգետիկան՝ որպես հետդասական գիտությունների միջառարկայական ուղղություն*, Պետություն և իրավունք, ՀՀ Իրավաբանների միություն, N 1 (47), Երևան, 2011թ, էջ 81-91:

[2] Տ.Վ. Սիմոնյան, *Արդի իրավունքի համալիրություն. սիներգետիկ մոտեցում*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին, Երևան, 2012, ԵՊՀ հրատ., էջ 181-199:

րորդ մակարդակը կամ այլ կերպ՝ համալիր համակարգերի տեսությունն ու մեթոդաբանությունը տալիս են ճանաչողության գործիքակազմ, որոնք կարող են կանոններ և օրինաչափություններ հայտնաբերել այնտեղ, որտեղ դրանք տեսանելի չեն:

Եվ այստեղ անհրաժեշտ է գիտակցել նաև, որ սոցիալ-քաղաքական և պետահիրավական արագ փոփոխվող միջավայրերում այդ գործընթացների վրա ազդող հնարավոր բոլոր գործոնների տեսանելիությունն է կերտում վերահսկելի ժամանակ: Իսկ սոցիալական համակարգում գործընթացների վրա ազդող առավելագույն թվով գործոնների տեսանելիության հասնելը հնարավոր է լինում, երբ հասարակության՝ առնվազն նման առաքելություն ստանձնած անձինք կարողանում են ժամանակը դիտարկել որպես սոցիալական տարածության դրսևորում, ինչն էլ համալիր համակարգերի տեսության մեթոդաբանական առավելություններից մեկն է:

Երկրորդ: Ինչ վերաբերում է երկրորդ խնդրին, թե նման իրականությունում և միջավայրում ինչ հարաբերական օրինաչափություններ կարելի է նկատել և դրանց օգնությամբ կամ, դրանք հաղթահարելով, ինչպես կարելի է որոշակիացնել իրավական նորմերը, որոնք հիմք պիտի հանդիսանան հետագա իրավակարգի և սոցիալական կարգի համար, ապա այստեղ ևս օգնության են գալիս բանաձևեր և գործիքներ, որոնք նույնպես չեն ձևավորվել իրավագիտության ընդերքում, այլ մաթեմատիկայում:

Ի տարբերություն արևելյան՝ արևելա-ասիական, մերձավոր-արևելյան քաղաքակրթությունների՝ հասարակություններում, որտեղ սոցիալական համակեցության հիմքը համայնական մտածողությունն է, որն էլ առավելապես խարսխված է կրոնական, ավանդական և բարոյական նորմերի վրա, սոցիալական կարգի ձևավորման հիմնաքարը եվրոպական կամ արևմտյան քաղաքակրթությունում իրավունքն է և իրավակարգը: Առավել բարդ և համալիր է անպիսի հասարակությունների սոցիալական կարգի ձավորման օրինաչափությունների բացահայտումը, որոնք ընկած են այս երկու՝

գուրջիևյան խոսքով ասած, «մետաֆիզիկական» և «դիալեկտիկական» քաղաքակրթությունների խաչմերուկում, որովհետև երկու աշխարհընկալումների առանձնահատկություններն էլ որոշիչ են դառնում հասարակական համակարգի համար՝ առանձին ժամանակահատվածներում թեքվելով մեկին առավելություն տալուց դեպի մյուսը[1]:

Այս աշխատանքում շեշտն առավելապես դրել ենք իրավունքի միջոցով սոցիալական կարգի ձևավորման վրա և, հետևաբար, ելնում ենք այն վարկածից, որ անցումային փուլից եվրոպական քաղաքակրթությանում գործող հասարակական համակարգը կայունացնելու գործում ահռելի մեծ դեր ունեն իրավունքն ու դրա որոշակիացումը:

Ինչո՞ւ որոշակիացումը, որովհետև սոցիումի զարգացման արդի պայմաններում սոցիալական հավասարակշռության և այն էլ՝ կայուն հավասարակշռության հասնելու հիմնական եղանակը ոչ թե վերևից ներդրվող օրենք-հրահանգների միջոցով համակարգի կայունացումն է, որը ժամանակի մեջ արդյունավետ չի գործում և համակարգը տանում է դեպի նոր անկայունություն, երբեմն՝ ավելի ցավոտ անկայունություն, այլ սոցիումի ընդերքում ձևավորման փուլում գտնվող կամ արդեն բյուրեղացած իրավական նորմերի հայտնաբերումն է և ամրագրումը:

Իսկ անցումային հասարակությունում այդպիսի իրավական նորմերի հայտնաբերումը շատ ավելի է բարդանում և գրեթե անտեսանելի է դառնում, որովհետև գործընթացները դիտարկողի, հետազոտողի համար չափազանց արագ են ընթանում, սրընթաց սոցիալ-քաղաքական, արժեքաբանական փոփոխությունները թույլ չեն տա-

[1] Տարբեր քաղաքակրթական ազդեցությունների ներքո գտնվող և անցումային ու անկայուն փուլ մտած հասարակություններում իրավունքի որոշակիացման հիմնախնդիրը կվերլուծվի մեր հետագա աշխատանքներում:

լիս նշմարել ձևավորվող համակեցության կանոնները, որոնց կարելի է իրավական որակ տալ:

Կարծես՝ Վ. Ներսիսյանցը, օգտվելով Կանտի և Հեգելի ազատական իրավունքի հայեցակարգից և իրավունքի ներսում ազատության ընդարձակման գաղափարից, մեզ իրավունքի հայտնաբերման ուղին տալիս է՝ ընդգծելով դրա որոշակիացումը արժեքաբանական երեք կարևոր գաղափարների և սոցիալական երևույթների միջոցով՝ ձևական հավասարություն, ազատություն և արդարություն, որոնց բովանդակությունների փոխազդեցության արդյունքում սոցիալական կեցույթի կոնկրետ ժամանակահատվածում մարդու, հասարակության և պետության գոյի իմաստավորման բովում էլ նշմարվում են համակեցության այն կանոնները, որոնք իրավական որակ ունենալու հնարավորություն ունեն:

Այնուհետև, նորից օգտագործելով Հեգելի՝ իրավունքի ներսում ընդարձակվող ազատության գաղափարը, Ներսիսյանցը զարգացնում է սոցիալական համակարգում ժամանակին համընթաց ազատության ընդարձակման և դրա ձեռքբերումներն իրավունքում արտացոլման տեսությունը՝ հաստատելով այդ գործընթացի անշրջելիությունը, եթե ողջամտորեն ենք մոտենում մարդկության և հասարակության էվոլյուցիային:

Սակայն Ներսիսյանցի առաջարկած այս մեթոդը գործում է առավելապես կայուն հասարակական համակարգում, որտեղ հարաբերությունների զարգացումը ընթանում է ոչ ավելի արագ, քան իրավական նորմեր որոշակիացնելու առաքելությունն ստանձնած դիտարկողի, հետազոտողի մտածողությունը: Ուստի այստեղ անպատասխան է մնում անցումային և անկայուն փուլում իրավունքի նորմեր որոշակիացնելու խնդիրը:

Այս խնդիրը լուծելու համար մեր նախորդ հոդվածում առաջարկել ենք օգտագործել մաթեմատիկայում և ժամանակակից տնտեսագիտությունում օգտավործվող Նեշի հավասարակշռության բանաձևը, որը ինքնիշխան (սուվերեն) կամ հարաբերական ազատություն ունեցող խաղացողների համար համակեցելի կամ փոխընդունելի լավագույն վարքագծի կանոնն է առաջարկում[1], որի ձևավորմանը նպաստում են հենց իրենք, և հետևաբար այն գործելու ավելի շատ հավանականություն ունի: Սա նաև օգնում է շահերի հավասարակշռման միջոցով սոցիալական հարաբերական հավասարակշռության հասնելուն:

Նեշի հավասարակշռությունը խաղերի տեսության հիմնարար հայեցակարգ է, որը կարճ ձևով կարելի է ներկայացնել որպես «*ռազմավարական խաղի մարտավարական կայուն իրավիճակ, որտեղ յուրաքանչյուր խաղացող ունի որոշակի սպասում մյուս խաղացողների վարքագծից և գործում է ողջամտորեն (ռացիոնալ)*»[2]:

Այստեղ, ըստ էության, խոսքը գնում է նաև իրավական որոշակիության մասին, իսկ կանխատեսելի վարքագիծը կարևոր գործոն է Նեշի հավասարակշռության միջոցով փոխադարձաբար ընդունելի վարքագծի կանոնի և մասնավորապես՝ իրավունքի նորմի որոշակիացման համար:

Եվրոպական միության և Եվրոպական խորհրդի կողմից զարգացրած իրավական որոշակիության սկզբունքը գործում է «կանխատեսելի փաստացի իրավիճակում ճիշտ իրավական նորմեր ընտրելիս»[3]: Կանխատեսելիությունն այս սկզբունքի նպատակն է՝ վերջնական իմաստը[4]:

Կանխատեսելությունն իրավունքում [սուբյեկտիվ իմաստով – S.U.] ներառում է տարբեր չափականություններ՝

---

[1] Taron Simonyan, Nash Equilibrium as A Mean For Determination of Rules of Law (For Sovereign Actors) | Materials of conference devoted to 80 th of the Faculty of Law of the Yerevan State University: Yerevan, YSU Press, 2014, pp.17-24.

[2] Martin J. Osborne & Ariel Rubinstein, A Course in Game Theory 14 (1994).

[3] Raitio, J., *The Principle of Legal Certainty in EC Law.* Dordrecht: Kluwer Academic Publishers, (2003), p.128.

[4] Hartley, T.C., *The Foundations of European Community Law.7th Ed.* Oxford: Oxford University Press., (2010), p. 146.

1. հետադարձ օրենքների մշակման հանդեպ մեծ դիմադրություն,

2. հստակ և որոշիչ օրենքներ ունենալու ձգտում,

և վերջապես, որն ամենակարևորն է՝

3. շարժընթացի (դինամիկայի) տեսանկյունից վստահելի օրենքների մշակման կամք[1]:

Սակայն, ինչպես արդեն բազմիցս է ասվել, անցումային փուլ մտած անկայուն հասարակություններում կանխատեսելի վարքագիծ ակնկալել, ճիշտ չի լինի, որովհետև սոցիալ-քաղաքական համակարգն ամբողջությամբ կամ մասնակիորեն թևակոխում է գործընթացների մի շրջափուլ, որտեղ, եթե կանխատեսելիությունը չի էլ բացակայում, ապա հասնում է նվազագույնի: Իսկ եթե անորոշությունը գերակայում է, ապա համակարգն ինքնին ավելացնում է իր խոցելիության հավանականությունը, որովհետև «անորոշությունը համադրելով համալիրության հետ՝ ստանում ենք խոցելիություն»[2]:

Սակայն այդ միջավայրում վերոնշյալ հավասարակշռության բանաձև օգտագործելու եղանակով և հնարավորության սահմաններում ձևավորված վարքագծի կանոններն ավելի երկար կյանք ունենալու հնարավորություն ունեն, քանի որ դրանք բացահայտվում են ոչ թե դեդուկտիվ (վերևից ներքև), այլ ինդուկտիվ (ներքևից վերև) եղանակով և, որոնց ձևավորմանն ուղղակիորեն մասնակցում են հենց սոցիումի ակտիվ անդամները՝ անկախ իրենց զբաղեցրած դիրքից, ովքեր իրենց վարքագծով պայմանավորում են հասարակական այնպիսի հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, որոնք էլ ընկած են ամբողջ հասարակական համակարգի հետագա շարժընթացի որոշակիացման հիմքում: Եվ այս ամենն էլ

[1] Aurelien Portuese, Orla Gough and Joseph Tanega, *The Principle of Legal Certainty as a Principle of Economic Efficiency*, University of Westminster, School of Law, Research Paper No. 13-13, p.3. հասանելի է հետևյալ հասցեում՝ http://ssrn.com/abstract=2332016:

[2] Ontonix S.r.I.: Quantative Complexity Management – www.ontonix.com

պայմանավորում է հասարակությունում շահերի հարաբերական հավասարակշռությունը:

Իրականում դժվար է հասկանալ գործընթացների օրինաչափություններն ամբողջությամբ, երբ ինքդ այդ գործընթացների մակարդակում ես և դրանց ամբողջացնող համակարգում, բայց կարող ես այդ ամորֆ, հոսուն և դիտարկման ակտի հետևանքով ձևափոխվող երևույթի ներսում նկատել որոշ ձգողական (գրավիտացիոն) կենտրոնացումներ և «բյուրեղներ», որոնք գործընթացների շարժընթացը պայմանավորող գործոններ են, երբեմն նաև՝ ուղենիշներ:

Այդ գործոնների և ուղենիշերի հիման վրա փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչ հարաբերական օրինաչափություններ կարելի է նկատել հարաբերությունների արագ զարգացման գործընթացների պայմաններում արդյունավետ իրավական նորմեր որոշակիացնելու համար և ինչպես կարող են անցումային և անկայուն հասարակական համակարգերում որոշակիացվեն իրավական նորմերը, եթե այդպիսի համակարգերում ոչ մի կայուն նորմ չի կիրառվում կամ գործում, և հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև օգտագործելով մաթեմատիկան՝ որպես համագիտական մեթոդաբանական գործիք՝ փորձել ենք առանձնացնել որոշ օրինաչափություններ, որոնք նկատել ենք ժամանակակից անցումային հասարակություններում իրավունքի որոշակիացման և ընդհանրապես՝ դրա շարժընթացի:

Այդ կանոնները դուրս բերելիս հաշվի ենք առել այն հանգամանքը, որ անցումային փուլում, երբ համակարգը մտնում է անկայունության փուլ տարբեր սոցիալ-քաղաքական կամ այլ գործոնների հետևանքով, դրա հիմնական նպատակը (եթե անգամ այն առաջին հայացքից նկատելի չէ), անկախ քաղաքական կամ այլ որակումներից, դիմադրողականության առավել բարձր մակարդակ ունեցող արտաքին և ներքին կառուցվածքների և տեղայնացված գործառույթների ձևավորումն է, որը կնպաստի հասարակական համակարգի, դրա քաղաքական իշխանության իրավական դրսևորման՝ պետականության գործունեության և ընդհանրապես՝ սոցիալ-

քաղաքական, պետահիրավական գործընթացների արդյունավետության բարձրացմանը այն իմաստով, որ այդ արդյունավետության բարձրացումը զուգահեռ է ընթանալու և ինքնին նպաստելու է համասոցիալական առաջընթացին: Իսկ այդ առաջընթացն այստեղ գործընթացների զարգացման արդի պայմաններում համընկնում է իրավունքի բովանդակությունում դասական իրաստով ազատության ընդարձակման հետ: Ահա այդ կանոնները.

1. Միևնույն համակարգում առավելագույն բարեկեցության հասնելով և միաժամանակ նվազագույն «անհարմարություն» պատճառելով այլ սուբյեկտներին՝ անձը ներդաշնակեցնում է իր մասնավոր շահը այլ մասնավոր և ընդհանուր շահի հետ՝ հաշվի առնելով համընդհանուր ընդունելի ազատության չափը, և հիմք դնում համակարգի հարաբերական հավասարաշկռության, իսկ այդ հավասարակշռության հիմքը՝ կենտրոնը, դառնում է համակարգի զարգացման այդ հատվածի ժամանակահատվածի համակեցության կանոնների, այդ թվում՝ իրավունքի հենման կետը և սկզբնաղբյուրը, որն էլ իրավունքի որոշակիացման համար ուղենիշ և չափորոշիչ է դառնում.

2. Այդ հենման կետից մինչև ձևավորված և/կամ ձևավորվող համակարգի հարաբերական սահմանն ընկած «տարածությունը» համակարգի ընդհանուր ազատության ընդարձակման չափն է (շառավիղ) համակարգի զարգացման կոնկրետ ժամանակահատվածի համար: Այն անընդհատ պետք է գտնվի ընդարձակման գործընթացում՝ շարունակաբար պայմանավորելով համակարգի մասնիկների՝ անձանց քանակի (հասարակությունում՝ մարդկանց թվակազմ) և որակի (անձնական, անհատական ազատություն) աճին.

3. Ընդհանուր համակարգի՝ հասարակության հարաբերական հավասարակշռության հենման կետը ընթանում է ոսկե պարույրի (Ֆիբոնաչիի թվեր) կանոնով՝ հետագծով՝ արտահայտելով իրավունքի շարժընթացը և կլանելով ազատության ընդարձակման նախորդ համակարգերի արդյունքները:

СЛОЖНОСТЬ ОПРЕДЕЛЕННОСТИ ПРАВА И НЕКОТОРЫЕ ЗАМЕТНЫЕ ЗАКОНОМЕРНОСТИ В НЕМ В ПЕРЕХОДНЫХ И НЕСТАБИЛЬНЫХ ОБЩЕСТВАХ

Тарон Симонян

Ассистент кафедры теории и истории государства и права ЕГУ, кандидат юридических наук

Одна из современных проблем переходных и нестабильных обществ - установление общественного строя и правопорядка в сложившейся ситуации, где никакая закономерность не может быть найдена. Определение закона в таких обществах также очень большая проблема, принимая во внимание, что сложность социального поведения в переходных и нестабильных периодах социальных изменений не дает возможности для определения предсказуемого поведения и, таким образом, создает проблемы для правовой определенности и правопорядка в целом.

В данном иследовании обозначены две основные проблемы:

(1) Какая методология может использоваться для понимания главных закономерностей изменений системы (в нашем случае – нестабильная социальная система), которая с классической точки зрения не имеет какого-либо правила?

(2) Какие закономерности могут быть выявлены с целью ускорения процессов в общественных отношениях, чтобы определить правовые нормы, и как эти правила могут быть определены в переходных и нестабильных социальных системах, где никакая стабильная и определенная норма не применена или не задействована?

В заключении делаются некоторые выводы, принимая во внимание теорию сложных систем, равновесие Нэша, некоторые особенности либерального правопонимания и либертарной теории и т.д.

THE COMPLEXITY OF LAW DETERMINATION AND SOME DISCERNIBLE PATTERNS WITHIN IT IN TRANSITIONAL AND UNSTABLE SOCIETIES

Taron Simonyan

Assisting professor in the YSU Chair of Theory and History of State and Law, Candidate of Legal Sciences

One of the contemporary issues of the transitional and unstable societies is the emergence of social and legal order in the circumstances, where no order can be found. The determination of law in such societies is also a very big problem taking into account that the complexity of social behaviour in transitional and unstable period of social change gives no opportunity for determination of a predictable behaviour and thus, creates problems for legal certainty and the whole legal order.

Two main issues are raised in the present research:

(1) What methodology can be used for understanding the main patterns of changes of the system (in our case – unstable social system), which has no rule in a classical point of view?

(2) What patterns can be discerned in accelerating processes in social relations in order to determine rules of law, and how can these rules be determined in transitional and unstable social systems, where no stable and certain norm is applied or acted?

In the concluding parts of each issue some inferences are tried to make, taking into account the theory of complex systems, Nash equilibrium, some features from liberal legal-understandings, and Libertarian theory etc.

Բանալի բառեր՝ *անցողիկ և անկայուն հասարակություն, իրավունքի որոշակիացում, բարդ համակարգերի տեսություն, բարդություն, Նեշի հավասարակշռություն, իրավակարգ, հասարակական կարգ:*

Ключевые слова: *переходное и нестабильное общество, определение права, теория сложных систем, сложность, равновесие Нэша, правопорядок, общественный порядок.*

Key words: *transitional and unstable society, determination of law, theory of complex systems, complexity, Nesh equilibrium, legal order, social order.*

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ալվարդ Ալեքսանյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Հայ եկեղեցու ամենանշանավոր դեմքերից է սուրբ Գրիգոր Տաթևացին: Այնքան մեծ է նրա վաստակը, որ նա դասվել է մեր եկեղեցու սուրբ վարդապետների կարգին: Նրա իրավաքաղաքական հայացքները ձևավարվել են Տաթևի համալսարանում ուսանելու և աշխատելու տարիներին: Որպես հասարակական և եկեղեցական գործիչ՝ նա մեծ դեր է խաղացել հայ եկեղեցու ինքնության պահպանման հարցում՝ պայքարելով կաթոլիկ քարոզիչների ունիթորների (միաբարների) դեմ:

Գրիգոր Տաթևացին թողել է մեծ ժառանգություն, որոնք արժեքավոր են նաև իրավաքաղաքական մտքի պատմության զարգացման տեսակետից: Հաստատված է այն տեսակետը, որ Գրիգոր Տաթևացու աշխարհայացքի ձևավորման աղբյուրը աստվածաբանությունն է: Նրա փիլիսոփայական այս կամ այն եզրակացությունը ինչպես նկատել է Ս. Արևշատյանը, ծառայել է աստվածաբանական որևէ դրույթի հիմնավորմանը: Սակայն բազմակողմանի զարգացումը նրան չի պահել քրիստոնեության շրջանակներում: «Աստվածաբանական կեղևի տակ ապրում է գիտնականի համարձակ միտքը, որը ձգտում է դուրս գալ միջնադարյան սխոլաստիկայի շրջանակներից»:[1]

Փիլիսոփայական, տնտեսագիտական, աստվածաբանական և իրավաքաղաքական հարցերը լուսաբանելիս Գրիգոր Տաթևացին ելնում է «Աստված է սկիզբն ամենայն գոյության»[2] դրույթից: Գրիգոր

[1] Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (15-18 դարեր), Եր., 1976, էջ 394:
[2] Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ, էջ 15: